

1.2. Ա Ր Տ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն (Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր)


1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2010թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում, փաստացի գներով, թողարկվել է 30033.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 29693.5 մլն դրամի պատրաստի արտադրանք, որից՝ ԱՊՀ երկրներում՝ 15724.1 մլն դրամի, այլ երկրներում՝ 317.7 մլն դրամի: ԱՊՀ երկրներում իրացված արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 146.0 տոկոս, այլ երկրներում՝ 157.5 տոկոս:

2009թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 103.3 տոկոս, իսկ առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 101.6 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական և ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար՝ 21.7 տոկոս և 78.3 տոկոս, 2009թ. հունվար-սեպտեմբերի համապատասխանաբար՝ 23.3 և 76.7 տոկոսի դիմաց:

*Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան ըստ ամիսների՝ տոկոսներով
նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ*



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան ըստ ամիսների


	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
<i>/տոկոսներով/</i>			
2009թ.			
հունվար	89.2	128.0	89.2
փետրվար	109.0	119.2	97.2
մարտ	95.5	120.4	92.6
ապրիլ	142.5	118.9	132.0
մայիս	107.4	123.7	141.8
հունիս	97.0	123.6	137.5
հուլիս	91.5	120.7	125.8
օգոստոս	105.8	118.7	133.0
սեպտեմբեր	124.5	123.1	165.6
հոկտեմբեր	101.1	115.5	167.4
նոյեմբեր	104.7	115.2	175.3
դեկտեմբեր	121.5	115.6	213.0
2010թ.			
հունվար	60.8	110.3	60.8
փետրվար	110.5	107.6	67.2
մարտ	135.2	106.9	90.8
ապրիլ	91.2	104.3	82.8
մայիս	89.1	101.2	73.7
հունիս	97.2	100.1	71.6
հուլիս	126.4	102.4	81.6
օգոստոս	104.4	104.3	85.2
սեպտեմբեր	90.1	103.3	76.8

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն
ըստ գործունեության հիմնական տեսակների


	/մլն. դրամ/		
	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով ¹	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով ¹	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով
Ամբողջ արդյունաբերությունը	30033.4	29693.5	103.3
այդ թվում՝			
հանքագործական արդյունաբերություն	13723.2	13685.2	92.6
որից՝			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	13258.1	13246.3	92.3
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	465.1	438.9	100.1
մշակող արդյունաբերություն	9789.1	9487.2	117.8
որից՝			
սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն	5724.7	5437.9	112.6
հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	245.7	245.7	4.6 անգ
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	551.5	551.5	90.7
բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	292.1	334.5	151.7
թղթի և ստվարաթղթի արտադրություն և հրատարակչական գործ	0.4	0.4	4.0 անգ
հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում	128.4	128.3	100.3
ռետինե և պլաստմասայե արտադրատեսակների արտադրություն	138.7	128.3	40.5
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	1075.9	1042.7	193.2
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	320.0	323.2	83.1
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	6.1	6.1	42.4
ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն	47.7	48.4	3.1 անգ
բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն	226.0	226.0	186.3
կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն	1031.9	1014.2	127.2
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	6521.1	6521.1	109.8
դրանից՝			
Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	6521.1	6521.1	109.8
որից՝			
Էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում	4115.8	4115.8	112.5
գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում խողովակաշարերով	2116.8	2116.8	103.5
գոլորշու և տաք ջրի մատակարարում	85.3	85.3	107.6
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	203.2	203.2	129.4

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն
ըստ արտադրության սեկտորների 2010թ. հունվար-սեպտեմբերին




Մշակող արդյունաբերություն



1. սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն
2. հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
3. կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն
4. բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
5. թղթի և ստվարաթղթի արտադրություն, հրատարակչական գործ
6. հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
7. ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
8. այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
9. պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
10. մեքենաների և սարքավորանքի արտադրություն
11. ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն
12. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն
13. կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



Տարածքային կտրվածքով նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալն ավելացել է Ստեփանակերտ քաղաքում, Հաղրուքի և Շահումյանի շրջաններում:


Ստեփանակերտ քաղաքում գործող արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 47.1 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 50.5 տոկոսի փոխարեն: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արդյունաբերական արտադրանքի տարածքային կառուցվածքում աճել է Մարտակերտի շրջանի տեսակարար կշիռը (5.7 տոկոսային կետով): Ասկերանի, Մարտունու և Հաղրուքի շրջաններում համանուն ցուցանիշը նվազել է համապատասխանաբար՝ 1.0, 0.8 և 0.1 տոկոսային կետով, իսկ Շուշիի և Քաշաթաղի շրջաններում՝ 0.2-ական տոկոսային կետով:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության շրջանների 2010թ. հունվար-սեպտեմբերին



2010թ. հունվար-սեպտեմբերին թողարկված 30033,4 մլն դրամի արտադրանքի դիմաց իրացվել է 29693,5 մլն դրամի պատրաստի արտադրանք կամ 98.9 տոկոսը:

Արդյունաբերական արտադրանքի իրացվելիությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների (տոկոսներով)



1. Ամբողջ արդյունաբերությունը
2. Հանքագործական արդյունաբերություն
3. Մշակող արդյունաբերություն
4. սննդամթերքների, ներառյալ խմիչքների արտադրություն
5. հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
6. կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
7. բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
8. թղթի և ստվարաթղթի արտադրություն, հրատարակչական գործ
9. հրատարակչական և պոլիգրաֆիկական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
10. ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
11. այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
12. պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
13. մեքենաների և սարքավորանքի արտադրություն
14. ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն
15. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն
16. կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն

17. Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում


Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ իրացվելիության նվազագույն մակարդակն արձանագրվել է ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունում, որտեղ իրացված արտադրանքի հարաբերակցությունը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ կազմել է 92.5 տոկոս: Իր հերթին, տվյալ ցուցանիշի հարյուր տոկոսից բարձր մակարդակ է դիտարկվել բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրությունում՝ 114.5 տոկոս, ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրությունում՝ 101.5 տոկոս, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունում՝ 101.0 տոկոս:

2010թ. հունվար-սեպտեմբերին արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն ըստ շրջանների բնութագրվում են հետևյալ տվյալներով.

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
և իրացումն ըստ շրջանների 2010թ. հունվար-սեպտեմբերին**

	Արտադրանքի /աշխատանքների, ծառայությունների/ ծավալը, փաստացի գներով /մլն.դրամ/	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով /մլն.դրամ/	Իրացված արտադրանքը տոկոսներով թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ
Ընդամենը	30033.4	29693.5	98.9
<i>այդ թվում՝</i>			
բ.Ստեփանակերտ	14130.8	13859.2	98.1
Ասկերան	1010.3	1033.1	102.3
Հաղրուք	359.2	294.2	81.9
Մարտակերտ	13491.2	13491.1	100.0
Մարտունի	775.7	749.7	96.6
Շահումյան	11.8	11.8	100.0
Շուշի	60.1	60.1	100.0
Քաշաթաղ	194.3	194.3	100.0

**Արդյունաբերական արտադրանքի իրացվելիության մակարդակն
ըստ շրջանների (տոկոսներով)**



Տարածքային կտրվածքով իրացվելիության ցածր մակարդակ է դիտվել Հաղրուքի և Մարտունու շրջաններում համապատասխանաբար՝ 81.9 և 96.6 տոկոս և Ստեփանակերտ քաղաքում՝ 98.1 տոկոս:

2010թ. հունվար-սեպտեմբերին արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ կազմել է 102.8 տոկոս, ընդ որում՝ աճ արձանագրվել է արդյունաբերության բոլոր բաժիններում:

**Արդյունաբերությունում զբաղվածների միջին ցուցակային թվաքանակը
2009-2010թթ. հունվար-սեպտեմբերին**

/համապատասխան ժամանակաշրջանի միջին ցուցակային թիվը,

<i>մարդ/</i>	2009թ. հունվար-սեպտեմբեր	2010թ. հունվար-սեպտեմբեր	Գինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Ամբողջ արդյունաբերությունը	5160	5305	102.8

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2009թ. հունվար- սեպտեմբեր	2010թ. հունվար- սեպտեմբեր	Գինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
<i>այդ թվում՝</i>			
Հանքագործական արդյունաբերություն	1076	1077	100.1
Մշակող արդյունաբերություն	2524	2564	101.6
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	1560	1664	106.7

Մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքն արդյունաբերական կազմակերպություններում 2010թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 5661.3հազ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 26.6 հազ. դրամով կամ 0.5 տոկոսով:

*Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները,
ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի* 2010թ. հունվար-սեպտեմբերին*

	Տնտեսա- վարող սուբյեկտ- ների քանակը	Տոկոս- ներով՝ ընդա- մենի նկատ- մամբ	Աշխատող ների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Տոկոս- ներով՝ ընդա- մենի նկատ- մամբ	Թողարկ- ված արտադրա- նքի (աշխա- տանքների, ծառայու- թյունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն.դրամ	Տոկոս- ներով՝ ընդա- մենի նկատ- մամբ	Պատրաս- տի արտա- դրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Տոկոս- ներով՝ ընդա- մենի նկատ- մամբ
Ընդամենը ԼՂՀ	279	100.0	5305	100.0	30033.4	100.0	29693.5	100.0
<i>այդ թվում՝</i>								
մինչև 5 մարդ գերփոքր)	177	63.4	411	7.8	2072.7	6.9	2078.4	7.0
6-50 մարդ (փոքր)	88	31.6	1227	23.1	4956.2	16.5	4824.3	16.2
51-100 մարդ (միջին)	5	1.8	368	6.9	1831.7	6.1	1797.5	6.1
101 և ավելի մարդ (խոշոր)	9	3.2	3299	62.2	21172.8	70.5	20993.3	70.7

**Սույն բաշխվածությունը իրականացված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն:*

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են, համապատասխանաբար՝ 63.4 և 31.6 տոկոս: Հատկանշական է, որ 95.0 տոկոս կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 23.4 տոկոսը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում 5.0 տոկոս կազմող միջին և խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 76.6 տոկոսը:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալը

/հաշվետու տարվա համադրելի բացթողնման գներով, մլն.դրամ/

	2009թ. հունվար- սեպտեմբեր	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	2010թ. հունվար- սեպտեմբեր	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	Գինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Սպառողական ապրանքներ, ընդամենը	4583.1	100.0	5122.6	100.0	111.8
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքներ	4042.3	88.2	4198.2	82.0	103.9
ոգելից խմիչքներ	425.3	9.3	658.0	12.8	154.7
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	115.5	2.5	266.4	5.2	2.3 անգ

այդ թվում՝					
թեթև արդյունաբերության	-	-	0.3	0.0	-
մշակութային, գիտության և սպորտի, սոցիալական և առողջապահական նշանակության	115.5	2.5	266.1	5.2	2.3 անգ

Ծանոթություն. Սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Հաշվետու ժամանակահատվածում սպառողական ապրանքների արտադրության ծավալը կազմել է 5122.6 մլն. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4583.1 մլն. դրամի դիմաց ու աճել է 11.8 տոկոսով:

**Հիմնական ապրանքատեսակների արտադրության դինամիկան
(բնեղեն արտահայտությամբ)**

	Չափման միավորը	2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին	Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Էլեկտրական էներգիայի արտադրությունը (սեփական արտ.)	մլն. կվտ/ժ	73.82	126.27	171.1
Մշակութային, գիտության և սպորտի ապրանքներ*	հազ.դրամ	112133.1	219298.8	195.6
<i>որից՝ կ ա հ ու յ ք</i>	<i>հազ.դրամ</i>	<i>112133.1</i>	<i>219298.8</i>	<i>195.6</i>
Կիր	տ	8.6	46.25	537.8
Գաջ	տ	4561.55	4309.2	94.5
Շինաքար	ք.մ	4057.4	2618.9	64.5
Բետոն	խ.մ	10375.9	17615.9	169.8
Ավազ	խ.մ	10693.3	16272.5	152.2
Խիճ	խ.մ	14881.5	19406.0	130.4
Երեսապատման սալեր	ք.մ	12324.73	17198.02	139.5
Մարմարե բլոկներ	խ.մ	276.1	254.2	92.1
Գրանիտե սալեր	ք.մ	1037.68	161.03	15.5
Եզրային քարեր	զմ.մ.	4545.75	4641.72	102.1
Պատուհանի կառուցահատված (բլոկ)	ք.մ	5682.65	4690.8	82.5
<i>որից՝ ալյումինի կառուցվածքներ</i>	<i>ք.մ</i>	<i>5596.01</i>	<i>4205.12</i>	<i>75.1</i>
Դռների կառուցահատված	ք.մ	1801.45	2972.34	165.0
Ասֆալտ	տ	300.0	0.0	-
Կարած ապրանքներ*	հազ.դրամ	54049.3	245714.0	454.6
Կոշիկ	հազ.գույգ	102.28	78.38	76.6
Կոնդենսատորներ	հազ.հատ	3.61	15.5	429.4
Խաղողի զինի	հազ.դալ	12.62	13.58	107.6
Օղի	հազ.դալ	77.31	52.37	67.7
<i>որից՝ թթի օղի</i>	<i>հազ.դալ</i>	<i>1.43</i>	<i>3.33</i>	<i>232.9</i>
Կոնյակ	հազ.դալ	0.28	1.1	392.9
Գարեջուր	հազ.դալ	0.04	0.0	-
Ոչ ակոհոլային ըմպելիքներ	հազ.լիտր հազ 0.5լ.	125.36	361.42	288.3
Հանքային ջրեր	շիշ	15.2	19.7	129.6
Միս	տ	532.6	318.13	59.7
<i>որից՝ թռչնի միս</i>	<i>տ</i>	<i>532.6</i>	<i>318.13</i>	<i>59.7</i>
Կարագ գյուղացիական	տ	1.66	12.08	727.7
Պանիր	տ	35.55	39.39	110.8
Կաթ	տ	163.75	121.0	73.9
Կաթնաշոռ	տ	159.33	142.31	89.3
Թթվասեր	տ	680.84	478.95	70.3
Մածուց	տ	193.08	263.36	136.4

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Չափման միավորը	2009թ. հունվար-սեպտեմբերին	2010թ. հունվար-սեպտեմբերին	Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով)
Թան	տ	40.14	51.88	129.2
Այուր	տ	5626.99	5262.94	93.5
Մակարոնեղեն	տ	43.58	114.63	263.0
Պղինձի և նախաձեռնի խողովակներ	հազ.գծ.մ.	263.16	141.08	53.6
Կաղնե տակառներ	հազ. լիտր	62.15	249.8	401.9
Մանրատախտակ	ք.մ	10128.22	512.0	5.06
Խտանյութ	թ.տ.մ.	21776.0	20108.0	92.3
	չ.տ.մ.	18756.0	18447.0	98.4
Հանքաքար	չ.տ.մ.	260826.0	263154.0	100.9
Մոդեռնացում	խ.մ	369.82	102.27	27.7
Վառելիքայտ	խ.մ	7744.0	9309.0	120.2
Հաց և հացաբուլկեղեն	տ	9354.32	10145.47	108.5
Պահածոներ*	մլն դրամ	131.03	234.76	179.2
Հրուշակեղեն	տ	39.07	38.62	98.8
Չավարեղեն	տ	19.45	18.0	92.5

*) Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի: